

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 18/2

15 մայիսի 2012թ.

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը, ուսումնասիրելով <Ագարակի Պղնձա-Մոլիբդենային Կոմբինատ> ՓԲԸ 27.04.2012թ-ի թիվ Y12-151 և Y12-152 գրություններով ՀՀ ԿԱ ՊԵԿ ստուգումների կազմակերպման և դիտարկման վարչության 25.04.2012թ. թիվ 1206847 և 1206857 արձանագրությունների վերաբերյալ ներկայացված գանգատները (առարկությունները) և վերջիններիս առնչվող նյութերն ու ապացույցները, եկավ եզրակացության, որ վերոգրյալ գանգատների հիման վրա ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը ենթակա է կարճման հետևյալ պատճառաբանությամբ:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 23.03.2012թ. թիվ 1206847 և 27.03.2012թ. թիվ 1206857 հանձնարարագրերի համաձայն, <Ագարակի Պղնձա-Մոլիբդենային Կոմբինատ> ՓԲԸ-ում (այսուհետ նաև Ընկերություն) կատարվել է հարկային հաշվանցումների և (կամ) վերադարձի, օրենքով սահմանված կարգով հաշվարկված պարտավորություններից ավելի վճարված գումարների հիմնավորվածության ուսումնասիրություն: Արդյունքում կազմվել են համապատասխանաբար՝ 25.04.2012թ. թիվ 1206847 և 25.04.2012թ. թիվ 1206857 արձանագրությունները, որոնց դեմ Ընկերության 27.04.2012թ-ի թիվ Y12-151 և Y12-152 գրություններով ՀՀ ԿԱ ՊԵԿ ներկայացվել են գանգատներ: Որից հետո ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի նախագահին հասցեագրված 14.05.2012թ-ի թիվ 12-245 գրությամբ բերվել է միջնորդություն, որով Ընկերությունը խնդրել է, որպեսզի 27.04.2012թ-ի թիվ Y12-151 և Y12-152 գրություններով ՀՀ ԿԱ ՊԵԿ ստուգումների կազմակերպման և դիտարկման վարչության 25.04.2012թ. թիվ 1206847 և 1206857 արձանագրությունների վերաբերյալ ներկայացված գանգատները՝ առարկությունների տեսքով, թողնվեն առանց քննարկման:

<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին կետի <բ> ենթակետի համաձայն. <Դիմումով հարուցված վարչական վարույթը կարճվում է, եթե դիմողը գրավոր ձևով հրաժարվում է իր դիմումից>:

Հանձնաժողովը, ղեկավարվելով <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին կետի <բ> ենթակետի դրույթներով, գտնում է, որ Ընկերության 27.04.2012թ-ի թիվ Y12-151 և Y12-152 գրություններով բերված գանգատների հիման վրա ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը ենթակա է կարճման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո ր ո շ ու մ է՝

Ղեկավարվելով <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին կետի <բ> ենթակետի դրույթներով, <Ագարակի Պղնձա-Մոլիբդենային Կոմբինատ> ՓԲԸ 27.04.2012թ-ի թիվ Y12-151 և Y12-152 գրություններով բերված գանգատների հիման վրա ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը կարճել:

Հանձնաժողովի նախագահ՝

S.ԲԱՐՍԵՂՅԱՆ